# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5242-Ա « 23 » դեկտեմբերի 2025թ

«ԵՐԵՎԱՆԻ Հ.100 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի 26.11.2025թ. հ.Ն/70264-25 գրությունը՝ Երևան քաղաքի, Նոր Նորք վարչական շրջանի, Նանսենի հ.22, հասցեում գտնվող «Երևանի հ.100 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի դրույթները.

1. Ժամանակավորապես դադարեցնել «Երևանի հ.100 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ից:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «Երևանի հ.100 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա.
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**